

## OCCURRING PROBLEMS AND MARRIAGE STATUS OF GEORGIAN POPULATION

N. BERDZENISHVILI

One of the main of worsening the demographical of the cities is the sharp of divorce. Emancipation of a city changed sharply the relationship between husband and wife, had an influence on giving the birth to children and more or less settled the tradition of the families with a little amount of children. Besides that, that the women's economical ensuring partially and her active participation in social activities provoke the disorganization of solidity of family and it increased the chance of living independently. Many countries of the world realize a distinct demographical policy. In Georgia, it should be directed to the stimulation of birth-rate, what's base is the strong economics.

### ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՂԵՏՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ


L. Ա. ՄԿՐՏՉԱՆ

Բնական աղետներն այնպիսի բնական երևույթներ են, որոնք առաջացնում են արտակարգ իրավիճակներ, խանգարում են մարդկանց և օբյեկտների նորմալ գործունեությանը:

Բնական աղետներն առաջանում են հանկարծակի և կրում են արտակարգ բնույթ: Աղետները բնության ուժեր են, որոնց կանխարգելումը մարդկանց ուժերից վեր է:

Բնական աղետները շատ բազմազան են, հետևաբար պետք է դրանք դասակարգել: Դրա համար օգտագործում են լայն տարածում գտած, այսպես կոչված, ծագումնաբանական դասակարգումը: Որոշ աղետներ առաջանում են երկրի ընդերքում, մյուսները՝ երկրակեղևի վրա, երրորդները՝ ջրոլորտում, իսկ մի մասն էլ՝ մթնոլորտում:

Ինչպես բոլոր բնական երևույթները, բնական աղետների միջև ևս գոյություն ունի կապ: Մի աղետը ազդում է մյուսի վրա: Բնական աղետների միջև գեներտիկական կախվածությունը կարելի է ցույց տալ հետևյալ նկարով:



Սլաքներով ցույց են տրված բնական երևույթների ուղղությունները, ինչքան սլաքները հաստ են, այնքան այդ կախվածությունը ակնհայտ է:

Ավելի սերտ կապ գոյություն ունի երկրաշարժի և ցունամու, հրաբխի ժայթքման և հրդեհների միջև: Արևադարձային փոթորիկները համարյա միշտ առաջացնում են ջրհեղեղ: Երկրաշարժը կարող է առաջացնել փլվածքներ, որոնք էլ իրենց հերթին կարող են փակել գետերի հոսքը՝ առաջացնելով ջրհեղեղներ: Երկրաշարժի և հրաբուխի ժայթքման միջև կապը փոխադարձ է. հայտնի են երկրաշարժեր, որոնք առաջացել են հրաբուխի ժայթքման հետևանքով, և հակառակը, հրաբուխի ժայթքում՝ պայմանավորված երկրակեղևի ընդերքի զանգվածի արագ տեղաշարժման հետ:

Աղետները պայմանականորեն ընդունված է բաժանել երկու մասի՝ մեծ և փոքր:

Աղետների մեծության մասին հաճախ դատում են զոհերի թվով և վնասի չափով:

Այս հոդվածում քննարկենք մթնոլորտային ծագման աղետները:

Մթնոլորտային ճնշման հավասարակշռումը տեղի է ունենում քամիների տեղաշարժման միջոցով: Ինչպես գիտենք, քամիները փչում են բարձր ճնշման մարզից դեպի ցածր ճնշման մարզ: Քամու ուժը կախված է ճնշումների տարբերությունից: Քամու պոռթկումները կարող են նշանակալից վնաս հասցնել: Փոթորիկները կարող են քանդել տներ, ավերել կամուրջներ և այլ շինություններ, վտանգավոր են մարդկանց կյանքի համար:

Անցյալ դարի սկզբին ծովագնաց Բոֆորտը մշակեց քամու ուժը բալերով չափող սանդղակ: Այդ սանդղակից օգտվում են մինչև օրս: Քամու բալերը և նրա արագության կախվածությունը արտահայտվում է հետևյալ հավասարությամբ՝  
 $v = 0.88 B^{1.44}$ :

Քամին սկսում է վնասներ հասցնել 20 մ/վրկ արագությունից սկսած:

**Փոշեմրրիկ (մրրկահողմ)** — սա մթնոլորտային երևույթ է, որի դեպքում օդ է բարձրանում մեծ քանակությամբ փոշի և ավազ: Երկրաշարժերի և արևադարձային փոթորիկների հետ համեմատած՝ մրրկահողմերը չեն համարվում այդքան կործանարար երևույթներ, սակայն նրանց ազդեցությունը կարող է լինել շատ տհաճ, երբեմն՝ ճակատագրական:

Ինչպես՝ս են առաջանում փոշեմրրիկները: Ցուրտ մթնոլորտային հոսքերը մտնում են տաք օդի շերտի տակ: Արագ խառնվելով՝ այն վեր է բարձրացնում նաև պինդ մասնիկներ: Դրանք սառչում են բազմաթիվ կիլոմետրեր տեղաշարժվելու ընթացքում: Փոշու ներթափանցման հետևանքով, սովորաբար, անմիջապես սկսում է անձրև տեղալ:

Փոշեմրրիկները մարդկանց կյանքին անմիջականորեն չեն սպառնում: Դրանք առաջացնում են խեղդվածություն՝ հանգեցնելով հիվանդությունների: Նաև դրանց միջոցով կարող են տարածվել վտանգավոր վիրուսներ, բակտերիաներ, որոնք պատճառ են հանդիսանում ծանր հիվանդությունների:

ՀՀ Գեղարքունիքի մարզում մթնոլորտային ծագման աղետներից հանդիպում են փոշեմրրիկները, պտտահողմերը, տեղատարափ անձրևները, կարկուտը, ձնաբուրքը, որոնք մեծ վնաս են հասցնում մարզի տնտեսությանը:

Սարգում մրրկահողմերն այնքան էլ մեծ տարածում չունեն: Սակայն, երբեմն-

երբեմն Արաբական և Իրանական անապատներից եկող օդը, որն իր մեջ բավականին շատ փոշի է պարունակում, անարգել հասնում է ՀՀ, ինչպես նաև Գեղարքունիքի մարզ՝ առաջացնելով մրրկահողմ, որի ժամանակ տեղացած անձրևն ունենում է դեղնավուն կամ գորշ երանգ և հատկապես վնասում է տնտեսությամբ:

Գեղարքունիքի մարզում հաճախակի են ուժեղ քամիները, պտտահողմերը, որոնք երբեմն ուղեկցվում են ուժեղ անձրևներով: Դրանց արագությունը երբեմն հասնում է 38-40 մ/վրկ-ի:

2004 թ.-ից մինչև օրս կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուժեղ քամիներն ավելի հաճախակի են լինում Գավառում և Սևանում, ավելի քիչ են Մարտունիում, իսկ ճամբարակի տարածաշրջանում ուժեղ քամիներ շատ քիչ են լինում:

Գավառ քաղաքում դիտված քամիների միջին ուժգնությունը 15-20 մ/վրկ է, երբեմն՝ 24 մ/վրկ: Ձմռանը ուժեղ քամիների պատճառով առաջանում են ձնաքթեր, որի պատճառով փակվում են հանրապետական նշանակության ճանապարհները: Օրինակ՝ 2007 թ. հունվարի 29-ին, փետրվարի 2-ին ուժեղ ձնաքթի հետևանքով (քամին՝ 35-40 մ/վրկ արագության) փակվել էին Սելիմի լեռնանցքը և այլ կարևոր ճանապարհներ:

Ուժեղ քամիների հետևանքով մարդուն հասցված վնասը արտահայտվում է ճանապարհների, կամուրջների, շինությունների, էլեկտրական լարերի, վերգետնյա խողովակների փլուզման ձևով, ինչպես նաև մարդիկ կարող են վնասվել թռչող բեկորներից: Քամիներն ավերում են շինությունների տանիքները՝ պատճառելով նյութական մեծ վնաս:

Ուժեղ քամու պատճառ կարող է հանդիսանալ մթնոլորտային ճնշման կտրուկ անկումը:

Քամիները կանխարգելել հնարավոր չէ, սակայն կարելի է դրանցից պաշտպանվել, իսկ քամու ուժն արդեն, ինչպես գիտենք, օգտագործում են էլեկտրաէներգիա ստանալու համար:

Ինչպե՞ս պաշտպանվել քամուց:

- Եթե ուժեղ քամու ժամանակ դուք գտնվում եք որևէ բնակավայրի փողոցում, հեռու մնացեք թույլ շինություններից, կամուրջներից, էլեկտրահաղորդակցության գծերից, ծառերից:

- Պաշտպանվեք թռչող բեկորներից:

- Փնտրեք արագ պատսպարվելու վայրեր:

- Մի մտեք վնասված շինությունների մեջ, քանի որ դրանք քամու պատճառով կարող են փլուզվել:

- Եթե դուք ուժեղ քամու կամ փոթորիկի ժամանակ հայտնվել եք դաշտում կամ միջգյուղական ճանապարհի վրա, շտապ դուրս եկեք մայրուղի, քանի որ այդտեղ ձեզ օգնելու հավանականությունն ավելի մեծ է:

- Մրրկահողմի ժամանակ փակեք ձեր դեմքը մարլայի շերտով, թաշկինակով, կտորով, իսկ աչքերը՝ ակնոցով:

Գեղարքունիքի մարզում հատկապես ամռան ամիսներին հաճախակի են տեղատարափ անձրևները և կարկուտը, որոնք սելավների, հեղեղումների և կարկտահարության պատճառ են դառնում: Սելավները հատկապես մեծ տարածում

ունեն մորենային նստվածքներով ծածկված Մարտունու տարածաշրջանի լեռնալանջերին, քանի որ մորենային նստվածքները սելավների առաջացման համար լավ նախապայման են հանդիսանում:

Յորդառատ անձրևներից երբեմն գետերը վարարում են՝ առաջացնելով ջրհեղեղներ: Այդպիսի ջրհեղեղների պատճառ հանդիսացան 2007թ. մայիսին տեղացած հորդառատ անձրևները, որոնց հետևանքով ինտենսիվորեն հալվեց լեռների ձյունը՝ պատճառ դառնալով Գավառագետի, Արգիճիի և մի շարք այլ գետերի վարարման:

Գեղարքունիքի մարզին մեծ վնաս է հասցնում նաև կարկտահարությունը: Քանի որ չկան հակակարկտային կայաններ, կարկուտը մեծ վնաս է հասցնում հատկապես մարզի գյուղատնտեսությանը: 2006թ. օգոստոսի 19-ին Ծաղկաշեն համայնքում տեղացած կարկտի պատճառով վնասվել են 100 հա հացահատիկի և 40 հա կարտոֆիլի ցանքատարածություններ: Կարկտահարություն դիտվում է գրեթե ամեն տարի, որից տուժում են հատկապես ցանքատարածությունները: Այսպիսով, բազմամյա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բնական աղետների դեմն առնելու համար անպայման պետք է կառուցվեն հակակարկտային կայաններ, ձեռնարկվեն մի շարք բնապահպանական այլ միջոցառումներ: Չնայած այդ աշխատանքները բավականին ֆինանսատար են, սակայն ծախսերն արդարացվում են սպասվելիք արդյունքներով:

#### **ПРИРОДНЫЕ БЕДСТВИЯ, ВОЗНИКШИЕ В РЕЗУЛЬТАТЕ АТМОСФЕРНЫХ ЯВЛЕНИЙ В ГЕГАРКУНИКСКОМ МАРЗЕ**

*Л. А. МКРТЧЯН*

Многолетние исследования показали, что для предотвращения стихийных бедствий обязательно нужно построить антиградовые станции, предпринимать ряд экологических мероприятий. Несмотря на большие финансовые затраты, расходы оправдываются ожидаемыми результатами.

#### **DISASTERS CAUSED BY ATMOSPHERIC PHENOMENA IN GEGHARKUNIK MARZ**

*L. A. MKRTCHYAN*

The article discusses the disasters that were caused by atmospheric phenomena and happened in Gegharkunik Marz.